ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

13 «Օգոստոս» **2018 թվականի N** 103-Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՎԹԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Էլեկտրա-էներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի երկրորդ էներգաբլոկի վթարային անջատման մասին 2018թ. օգոստոսի 1-ի թիվ 01-ՄՄ-12/401 գրությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. 2018թ. օգոստոսի 1-ին «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի երկրորդ էներգաբլոկի վթարային անջատման պատճառների ուսումնասիրման նպատակով ստեղծել հանձնաժողով /այսուհետ Հանձնաժողով/ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն Հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ ուսումնասիրել վթարային անջատման պատճառները, «Ատոմային էլեկտրակայանում շահագործման ժամանակ տեղի ունեցած

միջադեպերի քննության կարգի» համաձայն «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ կազմված հաշվետվությունը և ներկայացնել տեղեկատվություն արդյունքների վերաբերյալ:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. օգոստոսի 13...-ի N 103-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՎԹԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՁՆԱԺՈՂՈՎԻ

Գ. Բաղրամյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ (նախագահ),
Բ. Միրզոյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության կենտրոնական միջմարզային բաժնի պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության ատոմային էներգետիկայի բաժնի պետ
Ա.Գրիգորյան	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
Վ. Պետրոսյան	«Հայատոմ» ԳՀԻ ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Ա. Ջուլիկյան	«էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կենտրոնական կարգավարական ծառայության պետ
Ա. Օհանյան	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» («ԲԷՑ») ՓԲԸ ԱԱԱ և Հ ծառայության առաջատար ճարտարագետ